

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/2

28 փետրվարի 2017թ.

Քննարկվեց «Ինտեռոու Պառեքս Գրուպ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 16.12.2016թ. թիվ 1011304 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.09.2016թ. թիվ 1011304 հանձնարարագրի համաձայն «Ինտեռոու Պառեքս Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 16.12.2016թ. թիվ 1011304 ակտը:

Նշվեց նաև, որ ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43¹-րդ հոդվածի դրույթներով ընկերության գանգատում նշված հասցեով ուղարկվել է ծանուցագիր, որով տեղեկացվել է նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին: Սակայն ծրարը «Տեղափոխված» նշագրմամբ փոստային ծառայության կողմից հետ է վերադարձվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Ինտեռոու Պառեքս Գրուպ» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ